ՀՀ ԱԺ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

18.11.15թ Հ-9/813

«ԻՆՖՈՐՆԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆ
ՊԱՐՈՆ ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Ձեր 11.11.2015թ. թիվ 265-ի 1 գրությանն
Ի պատասխան: (ստացվել է՝ 13.11.2014թ.)

Հարգելի պարոն Հայրապետյան

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի առումով չի հանդիսանում փնտրվող տեղեկության տնօրինող: Միաժամանակ հայտնում ենք նաև, որ «Միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության երկկողմ միջազգային պայմանագրի ավանդապահը արտաքին գործերի նախարարությունն է: Եթե բազմակողմ միջազգային պայմանագրով նախատեսված է, որ դրա ավանդապահը Հայաստանի Հանրապետությունն է, ապա այդ պայմանագրի ավանդապահի գործառույթներն իրականացնում է արտաքին գործերի նախարարությունը: Նույն օրենքի 48-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը հաշվառում է Հայաստանի Հանրապետության՝ ուժի մեջ մտած բոլոր միջազգային պայմանագրերը:

Հարգանքով՝

Վարչության պետ Արսեն Բաբայան

ՀՀ, ք.Երևան 0095, Բաղրամյան 19, Հեռ./ֆաքս + 374 10 52 74 00, էլ.փոստ. press@parliament.am